ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՍԵՎԱՆԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ

N 570 24.08.2023թ

«Կաուպերվուդ ընդ կո» ՍՊԸ

Արտաշես Մկրտչյան

Ք. Երևան, Նոր Նորք, Գայի պ./շ/11/20

ՀՎՀՀ 01043009

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և **«Կաուպերվուդ ընդ կո» ՍՊԸ**-ի միջև 21.12.2022թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/3-2 ծածկագրով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին

ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Կաուպերվուդ ընդ կո» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 21.12.2022թ-ին կնքված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-23/3-2 ծածկագրով սննդամթերքի մատակարարման գնման պայմանագրով Ընկերությունը ստանձել է պայմանագրով սահմանված սննդի մատակարարման պարտավորությունը:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար»:

Տեղեկացնում ենք, որ մինչև 22.08.2023թ-ը ընկերությունը պատշաճ ձևով իրականացրել է սննդի մատակարարումը, սակայն ընկերության կողմից 22.08.2023թ.-ին էլ. Փոստով ստացել ենք գրություն, համաձայն որի, ընկերությունը հրաժարվում է իրականացնել պայմանագրով հաստատված ապրանքների մատակարարումը, պատճառաբանելով պայմանագրային պարտավորությունների կատարման անհնարինությունը (հիմնադիր տնօրենի առողջական և ընտանեկան վիճակ)(գրությունը կցվում է):

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից փաստացի չի կատարվելու պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ ՀՀ ԱՆ «Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ-ն միակողմանի հրաժարվում է կնքված ապրանքի

մատակարարման գնման պայմանագրից՝ համարելով այն միակողմանի լուծված, և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Առդիր 1 թերթ

ՏՆՕՐԵՆ՝ Հ. ԴԱՎԹՅԱՆ

Հարգելի գործընկեր

Պայմանագրային պարտավորությունների կատարման անհնարինության պատճառով (հիմնադիր տնօրենի առողջական և ընտանեկան վիճակ) << Կաուպերվուդ ընդ կո>> ՍՊ ընկերությունը դադարեցնում է տնտեսական գործունեությունը:

Հարգանքներով՝ տնօրեն Ա. Մկրտչյան 22.08.2023թ.